

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ  
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրը	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	39.	Երիտասարդական քաղաքականության մասնակցային գործընթացի խթանում և զարգացում	<ul style="list-style-type: none"> <li>• Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի մշակման նպատակով 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին ուսումնասիրվել են ԱՊՀ անդամ և եվրոպական երկրներում երիտասարդական աշխատողի ինստիտուտի արդյունավետ կիրարկման մեխանիզմները, ինչպես նաև երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման ծրագրերը:</li> <li>• 2015 թվականի հունիս ամսից իրականացվում է «Երիտասարդական աշխատողի և աշխատանքի մասին հետազոտություն» ծրագիրը: Ծրագիրը նպատակ ունի պարզելու՝             <ol style="list-style-type: none"> <li>1) երիտասարդական աշխատանքի նպատակները, խնդիրները, գործառույթները և գործունեության հիմնական ոլորտները.</li> <li>2) երիտասարդական աշխատողի ուսուցման մոդելները, ծրագրերը.</li> <li>3) երիտասարդական աշխատողի որակավորման (մասնագիտական և էթիկական) պահանջները, ինչպես նաև դրանց գնահատման գործիքները.</li> <li>4) երիտասարդական աշխատողի կարգավիճակը, աշխատանքի և մասնագիտության ճանաչելիությունը.</li> <li>5) երիտասարդական աշխատանքի գործունեության մեթոդաբանությունները (հավասարը հավասարին, շարունակական կրթություն, մեծահասակների կրթություն և այլն) հիմնական գործողությունների բնույթը.</li> <li>6) երիտասարդական աշխատանքի իրավական հիմքերը.</li> <li>7) երիտասարդական աշխատանքի որակի չափանիշները.</li> <li>8) երիտասարդական աշխատանքի ֆինանսավորման հնարավորությունները և ծավալը.</li> </ol> </li> </ul>

			<p>9) երիտասարդական աշխատողի հիմնական խմբերը և նրանց բնութագրիչները.  10) երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման համար իրավական, նյութատեխնիկական և մտավոր կարիքները:</p>
<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>40.</p>	<p>Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում</p>	<p>Գերակա խնդրի իրականացման համար մշակվել և կազմվել է «Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառման ծրագիրը, որն ուղարկվել է ՀՀ մարզպետարաններ և ԼՂՀ կառավարության առընթեր սպորտի պետական կոմիտե: «Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառումն իրականացվում է 3 փուլով. 1-ին փուլ՝ ներնախադպրոցական և ներդպրոցական, 2-րդ փուլ՝ համայնքային և 3-րդ փուլ՝ մարզային:</p> <p>«Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառումն իրականացվում է ՀՀ մարզերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախադպրոցական տարիքի երեխաների և դպրոցական 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում: Ներկայումս ՀՀ մարզպետարաններից և ԼՂՀ ԿԱ սպորտի պետական կոմիտեից ստացվել են «Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառման անցկացման հաշվետվությունները, որոնցում ներկայացված են համայնքներում և մարզային փուլերում միջոցառմանը մասնակցած նախադպրոցական հիմնարկների և դպրոցների, ինչպես նաև մասնակից երեխաների թիվը: Ներկայումս նախադպրոցական հիմնարկներում «Սպորտլանդիա-2015» մարզական զանգվածային միջոցառմանը մասնակցել են՝ համայնքային փուլում 195 նախադպրոցական հիմնարկ, 2340 մասնակից երեխա, իսկ մարզային փուլում՝ 26 նախադպրոցական հիմնարկ, 312 երեխա:</p> <p>Հանրակրթական դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում միջոցառմանը մասնակցել են՝ համայնքային փուլում 141 դպրոց, 1692 աշակերտ, իսկ մարզային փուլում՝ 16 դպրոց, 192 աշակերտ: Միջոցառմանը ընդամենը մասնակցել են 4536 նախադպրոցական տարիքի երեխաներ և աշակերտներ:</p> <p>«Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառումը իրականացվում է տարվա ընթացքում, և վերջնական արդյունքները կամփոփվեն տարեվերջում:</p> <p>Ծրագիրն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:</p>

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումը	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4
<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>68.</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. մայիսի 4-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>2015 թվականի փետրվարի 13-ի N 1/06/180-15 գրությամբ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. մայիսի 4-ի N 587-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ կառավարություն: Ներկայացված որոշման նախագիծը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թ. մարտի 10-ի N 238-Ն որոշում):</p>
	<p>69.</p>	<p>«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>2015 թվականի մայիսի 8-ի N 1/05/593-15 գրությամբ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» որոշման նախագիծը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ կառավարություն: Ներկայացված որոշման նախագիծը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թ. մայիսի 27-ի N 559-Ա որոշում):</p>

	<p>70. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի N 1428-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի N 1428-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը շահագրգիռ նախարարությունների առաջարկությունների հիման վրա լրամշակելուց հետո 2015 թվականի մարտի 23-ի N 1/05/391-15 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>
	<p>71. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի ու հավելավճարների վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի ու հավելավճարների վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով 2015 թվականի ապրիլի 20-ի N 1/05/526-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:</p>